

**Ընտանեկան նպաստների հիմնադրամ (CAF). դերն ու նպատակները**

Ընտանեկան նպաստների հիմնադրամի \* (CAF) (այսուհետ՝ Հիմնադրամ) առաքելությունն է սոցիալապես աջակցել ընտանիքներին իրենց առօրյա կյանքում՝ նպաստելով նրանց կենսամակարդակի բարձրացմանը: Հիմնադրամի աջակցությունն իրականացվում է պետական նպաստների ամբողջական կամ մասնակի վճարումներով՝ այն ուղղելով ընտանիքներին, միայնակ կամ սոցիալապես անապահով անձանց (բնակարանային վարձակալման, երեխայի խնամքի, կենսապահովման և այլ ծախսերի հատուցման համար): Իրականացվող միջոցառումները երաշխավորում են որոշակի սոցիալական խավերի մուտքը որակյալ բնակարան, մեղմացում են եկամուտների անհավասարությունն ու երկրորդ աշխարհամարտին հաջորդած «Ժողովրդագրական պայթյունի» (baby-boom) հետևանքով ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակը:

**Ընտանեկան նպաստների հիմնադրամի իրականացվող միջոցառումներն են.**

- Ֆինանսական հատկացումներ՝ ապահովության հավելյալ եկամուտ կամ եկամտին փոխարինող վճարների տեսքով: Օրինակ, սոցիալական և ընտանեկան նպաստներ, բնակավարձերի վճարներ, ինչպես նաև նվազագույն սոցիալական հատկացումներ (հաշմանդամության նպաստ, զբաղվածության հավելավճար, ակտիվ համերաշխության եկամուտ, որը հիմնականում հասցեագրված է գոյության որևէ միջոց չունեցող անձանց):
- Տարբեր ծառայությունների և համայնքային հաստատությունների ստեղծում ու համաֆինանսավորում (օրինակ, մուր-մանկապարտեզներ, սոցիալական աջակցության կենտրոններ):

**Ընտանեկան նպաստներ. տրամադրման կարգն ու ընդհանուր դրույթներ**

Ընտանեկան նպաստներից օգտվելու համար գործում են որոշակի նախապայմաններ:

**Նպաստների տրամադրման հիմքերը ծնողների համար**

**Բնակության վայր:** Շահառու ընտանիքները պետք է բնակվեն Ֆրանսիայում՝ անկախ իրենց ազգային պատկանելությունից և քաղաքացիական կացության կարգավիճակից (գրանցված կամ չգրանցված ամուսնություն, ամուսնալուծություն և այլն): Այնուամենայնիվ, այն օտարերկրացիները, որոնք չեն հանդիսանում Եվրամիության կամ Շվեյցարիայի եվրոպական տնտեսական տարածքի քաղաքացիներ, պետք է ներկայացնեն Ֆրանսիայում բնակության իրավունքի բավարար իրավական հիմքեր: Արտերկրում ծնված երեխաների համար ծնողները պարտավորված են ներկայացնել նրանց Ֆրանսիա օրինական մուտքը հավաստող փաստաթղթեր:

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ (CAF)

**Եկամուտներ:** Պետության կողմից վճարվող սոցիալական հատկացումների համար հիմք են ընդունվում ընտանիքների տարեկան եկամուտները, ինչը վերջիններս հայտարարագրում են երկրի հարկային ծառայություններում: Եկամուտների հաշվարկման և նպաստների տրամադրման պայմանները հասանելի են [www. Caf.fr](http://www.Caf.fr) պաշտոնական էջի «Տեղեկանալ իմ իրավունքների մասին > Վաղ մանկություն» («S'informer sur les aides > Petite enfance») բաժնում:

### Նպաստների հատկացման հիմքերը երեխաների համար

**Տարիքը:** Նպաստառու են 16 տարին չլրացած երեխաները կամ մինչև 20 տարին չլրացած այն դեռահասները, որոնք գտնվում են իրենց ծնողների խնամքի ներքո: Իսկ բնակարանների աջակցության և ցածր եկամուտ ունեցող բազմազավակ ընտանիքներին տրամադրվող նպաստներից կարող են օգտվել մինչև 21 տարեկանը բոլորած անձինք:

**Ուսում և աշխատանք:** Ուսումնառությանը հատկացված դրամական միջոցներից կարող են օգտվել 6-ից 15 տարեկան այն երեխաները, որոնք ընդգրկված են որևէ ուսումնական հաստատությունում:

Իսկ զբաղվածության ոլորտում 2017թ հունվարի 1-ի դրությամբ 16-20 տարեկան երիտասարդ աշխատողների աշխատավարձը չպետք է գերազանցեր 907, 19 եվրոն:

### Ընտանեկան նպաստների տեսակները

#### 1/ Հատկացումներ մեկ երեխայի դեպքում

- Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի նպաստ (PAJE)

#### Նպաստի տրամադրման կարգը

Նպաստից օգտվելու համար անհրաժեշտ է հղիության մասին տեղեկացնել փաստացի բնակության վայրին պատկանող Հիմնադրամին (CAF) և Առողջապահական ապահովագրության հիմնադրամին (CPAM)՝ հղիությանը հաջորդող առաջին 14 շաբաթների ընթացքում: Տեղեկանքը լրացվում է մանկաբարձ մասնագետի կողմից :

Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի նպաստը (PAJE) միաժամանակ ընդգրկում է .

**Երեխայի ծննդյան միանվագ նպաստը** (Prime à la naissance), որի հաշվարկման համար հիմք է ընտանիքի տարեկան եկամտի որոշակի գնահատման համակարգը:

**Երեխայի որդեգրման միանվագ նպաստը** (Prime à l'adoption), որը փոխհատուցում է երեխայի որդեգրմանն առընչվող հիմնական ծախսերը նրա մինչև 3 տարեկանը լրանալը:

**Մանկահասակ երեխայի հիմնական նպաստը** (Allocation de base), որը վճարվում է մինչև երեխայի 3 տարեկանը նախորդող օրացույցային ամսվա վերջին օրը: Նպաստի չափը որոշվում է ընտանիքի եկամուտների գնահատման որոշակի մեխանիզմի միջոցով:

**Երեխաների խնամքի ազատ ընտրության հավելավճար կամ մայրության օժանդակում (CMG)**

Հիմնադրամը մասնակիորեն փոխհատուցում է մայրությանն օժանդակող տարբեր ծառայությունների /օրինակ, դայակի ծառայության/ համար: Գումարի չափը նույնպես կախված է ընտանիքի եկամուտներից: Հիմնադրամը մասնակիորեն կամ ամբողջությամբ փոխհատուցում է նաև սոցվճարները: Դայակների ծառայություններից օգտվելու համար այցելել [www.mon-enfant.fr](http://www.mon-enfant.fr) կայք:

○ **Երեխայի խնամքի հատուկ նպաստ (PREPARE)**

Այս նպաստը գործում է 2015 թ հունվարի 1-ից սկսած և ընդգրկված է մինչև 3 տարեկան երեխայի խնամքի նպաստի կազմում, որի վճարումը թույլ է տալիս ծնողներին կամ նրանցից որևէ մեկին դադարեցնել կամ կրճատել իր աշխատանքային գործունեությունը ի շահ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի: Որդեգրման դեպքում հիշատակված նպաստը տրամադրվում է խնամքի տակ գտնվող երեխաների մինչև 20 տարին լրանալը: Նպաստից օգտվելու համար պարտադիր պայման է ութ եռամսյակ շարունակ կենսաթոշակային ապահովագրական վճարումներ կատարելու փաստը, ինչը ընդհանուր առմամբ հավասարազոր է երեխայի ծննդից առաջ երկու տարվա մասնագիտական գործունեությանը:

○ **Դպրոցական միանվագ նպաստ (ARS)**

Դպրոցական միանվագ նպաստը նույնպես հատկացվում է ընտանիքների եկամուտների հաշվարկման հիման վրա: Վճարման գործընթացը մեկնարկում է օգոստոս ամսվա վերջերից: Այն նպատակ ունի աջակցել ծնողներին՝ հոգալու 6-18 տարեկան աշակերտների սեպտեմբերմեկյան ծախսերը: Եկամուտներին վերաբերող տեղեկություններին ծանոթանալու համար այցելել [www.caf.fr](http://www.caf.fr) կայքի «Իրավունքներ և հատկացումներ» խորագրի «Մանկություն և Երիտասարդություն» բաժին («Droits et prestations > Enfance et jeunesse») :

○ **Ընտանեկան աջակցության կամ միայնակ ծնողի աջակցության նպաստ (ASF)**

Ընտանեկան աջակցության նպաստը (ASF) հատկացվում է 4 ամիսների ընթացքում այն միայնակ ծնողներին, որոնք զրկված են մյուս ծնողի ֆինանսական մասնակցությունից երեխաներին խնամելու գործում: Նպաստի վճարումը կարող է երկարաձգվել՝ ցածր ապրուստավճարը /ալիմենտ/ հավելելու նպատակով: Այն երկարացնելու համար պետք է դիմել փաստացի բնակության վայրի Առաջին Ատյանի դատարան Ընտանեկան գործերով զբաղվող դատավորին: Ավելին իմանալու համար այցելել [www.pension-alimentaire.caf.fr](http://www.pension-alimentaire.caf.fr) կայք:

○ **Ծնողի ներկայությունն ապահովող օրավարձ-նպաստ (AJPP)**

Վերոնշյալ նպաստը պետության կողմից տրամադրվում է այն ծնողին, որը հարկադրորեն դադարեցրել է իր մասնագիտական գործունեությունը՝ հոգ տանելու ծանր հիվանդ, հաշմանդամ կամ պատահարի ենթարկված երեխային:

○ **Հաշմանդամ երեխայի խնամքի նպաստ (AEEJ)**

Այս նպաստը հատկացվում է մինչև 20 տարին չլրացած հաշմանդամ երեխա ունեցող ծնողներին՝ նրանց հիմնական կարիքները հոգալու համար:

## 2/ Հատկացումներ երկու երեխայի դեպքում

### ○ Ընտանեկան նպաստ (Allocation familiale)

Նպաստի այս տեսակին կարող են հավակնել նվազագույնը 2 երեխա ունեցող ընտանիքները՝ մինչև նրանց 20 տարին լրանալը: Գլխավոր նախապայման է եկամուտների հաշվարկն ու երեխայի ծննդի մասին Հիմնադրամին (CAF) պաշտոնապես տեղեկացնելու հանգամանքը :

## 3/ Հատկացումներ երեք և ավելի երեխայի կամ բազմազավակ ընտանիքի դեպքում

### ○ Ընտանեկան հավելավճար (Complément familial)

Այն հատկացվում է 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին՝ երեխաների 3-ից մինչև 20 տարին լրանալու ժամանակահատվածում: Հատկացման համար անխախտ պայման է ընտանիքների եկամուտների հաշվարկման հատուկ կարգը:

### **Բնակարանների աջակցության օգնություն. տեսակներն ու հատկացման կարգը**

Այս ֆինանսական օգնությունները նպատակ ունեն կրճատել շահառուների բնակարանների վարձաճարը կամ անշարժ գույքի վարկերի ամսական գումարը:

**Հատկացման պայմանները:** Նշենք, որ հատկացման պայմանները նույնն են երեք տեսակ բնակարանային նպաստների համար. բնակարանը պետք է լինի մշտական բնակության վայր, և վարձակալները պետք է այնտեղ բնակվեն տարվա մեջ նվազագույնը 8 ամիս:

Բնակարանային օգնությունը հաշվարկվում է համաձայն եկամուտների, ընտանիքի կազմի, բնակության վայրի և վարձավճարի չափի: Օրինակ, 2017 թվականին բնակարանային նպաստ ստանալու համար շահառուների տարեկան եկամուտը 2015-ին չպետք է գերազանցեր 12 012 եվրոն:

**Բնակարանային աջակցության տեսակները:** Բնակարանային պայմանների բարելավման նպատակով հատկացվող « Բնակարանային անհատական օգնություն» (APL), բազմազավակ ընտանիքների համար նախատեսված « Ընտանեկան բնակարանի նպաստ » (ALF), մունիցիպալ բարձր գին ունեցող բնակարանների համար նախատեսված « Սոցիալական բնակարանի նպաստ » (ALS) :

**Բնակարանային անհատական օգնություն (APL) :** Այն տրամադրվում է սեփականատիրոջը կամ վարձատուին, որի արդյունքում բնակվարձը զգալիորեն կրճատվում է:

Ինչպես արդեն նշվել է, հետևյալ դրամական օժանդակությունը որոշակի պայմաններով կարող է տրամադրվել նաև սեփականատերերին կամ ապագա սեփականատերերին:

**Ընտանեկան բնակարանի նպաստ (ALF):** Այս նպաստի հնարավոր շահառուներն են այն տնային տնտեսությունները, որոնք չեն կարող օգտվել վերը հիշատակված բնակարանային նպաստից, բայց իրենց խնամքի տակ ունեն երեխաներ կամ այլ անձինք: Այն մասնավորապես վերաբերում է 5 տարվա վաղեմության ամուսնացած ընտանիքներին, մինչև զույգերի 40 տարին լրանալը:

**Սոցիալական բնակարանի նպաստ (ALS):** Բնակարանային օժանդակության այս տեսակը հատկացվում է այն անձանց, ովքեր չեն կարող օգտվել վերը նշված երկու նպաստներից, սակայն զբաղեցնում են մունիցիպալ բնակարաններ:

*Հ.Գ. Որոշ դեպքերում բնակարանային աջակցության նշված 3 տեսակներից կարող են օգտվել այն անձինք, որոնք բնակվում են հանրակացարաններում, հյուրանոցներում, ուսանողական կացարաններում: Դա մասնավորապես վերաբերում է այն հաշմանդամ կամ տարեց անձանց, ովքեր վարձակալական հիմունքներով բնակվում են մասնավոր անձանց մոտ, ծերանոցներում կամ որևէ բժշկական հաստատությունում:*

*Ի դեպ, որոշ դեպքերում հնարավոր է օգտվել նաև բնակարանի տեղափոխման ծախսերի հավելավճարից կամ զրո տոկոսադրույքով վարկերից՝ նախատեսված բնակարանային պայմանների բարելավման համար:*

## **Եկամուտների հավելավճարներ. հատկացման պայմաններն ու տեսակները**

Եկամտային հավելավճարները հասցեագրված են ցածր եկամուտ ունեցող աշխատողներին: Հավելավճարի տեսակներն են. Մասնագիտական գործունեության հավելավճար (Prime d'activité), Ակտիվ համերաշխության եկամուտ (RSA) և Հաշմանդամության նպաստ (AAH):

**Աշխատանքային գործունեության հավելավճար (Prime d'activité):** Նպաստի տրամադրումը հիմնականում նպատակ ունի խթանել զբաղվածությունը ազգաբնակչության խոցելի հատվածի շրջանում: Դրանից օգտվելու իրավունք ունեն Ֆրանսիայում օրինական բնակվող 18 տարեկանը բոլորած այն անձինք, ովքեր ծավալում են որևէ մասնագիտական գործունեություն: Իսկ այն օտարերկրացիները, ովքեր Եվրամիության կամ Շվեյցարիայի եվրոպական տնտեսական տարածքի քաղաքացիներ չեն, պետք է առնվազն հինգ տարի մշտապես բնակվեն Ֆրանսիայում կամ բնակության թույլտվություն ունենան: Գործունեության հավելավճարի գումարի չափը հաշվարկվում է ըստ տվյալ տնային տնտեսության ընդհանուր եկամուտների: Շահառուները պարտավորվում են հայտարարագրել իրենց եկամուտները եռամսյակային կտրվածքով՝ [www.Caf.fr](http://www.Caf.fr) կայքի « Իմ էջը » (« Mon Compte ») բաժնում:

**Ակտիվ համերաշխության եկամուտ (RSA):** Այս նպաստի տրամադրումը ապահովում է գոյատևման նվազագույն եկամտի աղբյուր: Այն հաշվարկվում է տնային տնտեսությունների ընդհանուր եկամուտների հիման վրա: Նպաստին հավակնելու իրավունք ունեն Ֆրանսիայում օրինական բնակվող 25 տարին լրացած անձինք: Իսկ այն օտարերկրացիները, ովքեր Եվրամիության կամ Շվեյցարիայի եվրոպական տնտեսական տարածքի

քաղաքացիներ չեն, պետք է առնվազն հինգ տարի մշտապես բնակվեն Ֆրանսիայում կամ բնակության թույլտվություն ունենան: Փոխարենը շահառուները պարտավորվում են հայտարարագրել իրենց եկամուտները եռամսյակային կտրվածքով՝ [www.Caf.fr](http://www.Caf.fr) կայքի համապատասխան բաժնում: Ճշտելու համար, թե արդյոք դուք կարող եք օգտվել այս նպաստից, այցելել [www.Caf.fr](http://www.Caf.fr) կայքի «Իմ ծառայություններն առցանց > Գնահատել իմ իրավունքները» (« Mes services en lignes > Estimer mes droits ») բաժին:

**Հաշմանդամության նպաստ:** Հաշմանդամության նպաստի իրավունք ունեն 20 տարին լրացած, որոշ դեպքերում 16 տարին լրացած անձինք, ովքեր ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն 50 տոկոս սահմանափակում:

**Սոցիալական գործունեություն ի շահ ընտանիքների:** Ընտանեկան նպաստների հիմնադրամի յուրաքանչյուր մասնաճյուղ վարում է սոցիալական գործունեության իր սեփական քաղաքականությունը՝ համաձայն նախապես սահմանված առաջնահերթությունների: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել [www.Caf.fr](http://www.Caf.fr) [Menu > Ma Caf > Offre de service](#)՝ նախապես մուտքագրելով ձեր համայնքի փոստային ինդեքսը:

*Թվարկենք հիմնադրամի սոցիալական գործունեության մի քանի օրինակ: արտադարձական ազատ ժամանցի կազմակերպման, տնային սոցիալական ծառայությունների, համերաշխության բնակարանային ֆոնդերի ֆինանսավորում և « Անիմատոր » միջին մասնագիտական դիպլոմի պատրաստման ծախսերի փոխհատուցում (BAFA):*

**Ինչպես օգտվել Ընտանեկան նպաստների հիմնադրամի (CAF) սոցիալական հատկացումներից**

Եթե դուք արդեն նպաստառու եք, ապա կարող եմ այցելել [www.Caf.fr](http://www.Caf.fr) կայքի ձեր անձնական էջ («Mon compte»)՝ մուտքագրելով նպաստառուի ձեր համարն ու գաղտնաբառը: Գաղտնաբառի կորստի դեպքում այն կվերականգնվի համապատասխան դիմումի դեպքում: Հիմնադրամի հետ հաղորդակցությունը հեշտացնելու համար պետք է տրամադրել էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և տեղեկացնել սոցիալական կամ քաղաքացիական կարգավիճակի փոփոխությունների մասին: Ձեր էջի օգնությամբ դուք կարող եք նաև միաժամանակ տեղեկանալ սոցիալական հատկացումներից օգտվելու ձեր իրավունքների մասին:

Իսկ այն անձինք, ովքեր նպաստառու չեն, պետք է ստեղծեն Հիմնադրամի իրենց հաշվեհամարը: Այդ նպատակով նախևառաջ պետք է սոցիալական հատկացման համար գրավոր դիմում ներկայացնել: Դիմումի համար Հիմնադրամի էլեկտրոնային հարթակում վերբեռնելի է հատուկ ձևաթուղթը, որը թույլ է տալիս իրավասու մարմնին ծանոթանալ դիմողի անձնական, մասնագիտական վիճակին և եկամուտներին՝ վերջինիս սոցիալական հատկացումներից օգտվելու իրավունքը գնահատելու համար: Արդյունքում ձեր տվյալները կգրանցվեն Հիմնադրամի տվյալների բազայում և ձեզ կտրամադրվի նպաստառուի

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ (CAF)

անձնական համար և ժամանակավոր գաղտնաբառ, նույնիսկ եթե ձեր հայրը հետագայում մերժվի: Անհրաժեշտ է պահպանել տրամադրված մուտքանունը /լոգին/, իսկ առաջին ինտերնետային կայքի ժամանակ անհատականացնել մեկ անգամյա օգտագործման գաղտնաբառը՝ փոփոխելով այն:

**Հիմնադրամի կայքի միջոցով կատարվող բոլոր գործողությունները արագացնում են ձեր գործի ուսումնասիրման գործընթացը:**

**Ինչպես արդեն նշել ենք, անհրաժեշտ է բոլոր փոփոխությունների մասին հրնթացս տեղյակ պահել Հիմնադրամին.** ամուսնություն, բաժանություն, ընտանիքի անդամի բացակայություն, աշխատանքային գործունեության վերսկսում, քանի որ բոլոր այս իրադարձություններն անմիջականորեն անդրադառնում են սոցիալական հատկացումների վրա: Փոփոխությունները կատարվում են «Իմ էջ»-ի (« Mon compte ») « Mon profil » հատվածում:

Պետական սոցիալական հատկացումներից օգտվելու ձեր իրավունակությունը ճշտելու համար, դուք կարող եք օգտագործել Հիմնադրամի պաշտոնական կայքում հասանելի սոցիալական իրավունքների գնահատման փորձարարական թեստերը (simulation des droits):

**Ինչպես կապ հաստատել Հիմնադրամի (CAF) հետ**

Պարզապես պետք է այցելել [www.Caf.fr](http://www.Caf.fr) կայքի հրամանացանկի « Հաղորդակցվել իմ Հիմնադրամի հետ » (« Menu » > « Ma Caf > Contacter ma caf ») բաժին :

Հիմնադրամի հետ կարող եք նաև կապ հաստատել ձեր էլեկտրոնային փոստի միջոցով, փոստով նամակ հղելով կամ ուղղակի այցելելով ձեր համայնքին պատկանող Հիմնադրամի (CAF) ընդունելության կետեր, որոնք գործում են մեկ պատուհանի սկզբունքով: Գործում է նաև տեսազանգերի համակարգը, որը թույլ է տալիս արագ կապ հաստատել Հիմնադրամի աշխատակիցների հետ՝ նրանց ուղղելով ձեզ հուզող հարցերը: Եթե ձեր համակարգիչը համալրված է սքաներով, դուք կարող եք նաև անհրաժեշտ փաստաթղթերի թվային պատճեններն արագորեն փոխանցել իրավասու մարմնին: Նմանատիպ ծառայություններից օգտվելու համար նախապես մուտքագրեք նպաստառուի ձեր համարն ու գաղտնաբառը:

Հիմնադրամի յուրաքանչյուր համայնքային մասնաճյուղ ունի ծառայությունների իր շրջանակն ու ժամանակացույցը: Օրինակ, եթե դուք պատկանում եք Բուշ դյու Ռոն բնակավայրի Ընտանեկան նպաստների հիմնադրամին (CAF 13), ապա Հիմնադրամի աշխատակիցները ձեզ հետաքրքրող հարցերին կարող են պատասխանել ուրբաթ օրերին ժամը 8.45-ից մինչև 12.15 և 13.30-ից մինչև 16.00 ընկած ժամանակահատվածում:

**\* Հանրային կառավարման մարմինների և նպաստների անվանումները հիմնականում թարգմանված են բառացիորեն: Միաժամանակ փակագծերում նշված են դրանց ֆրանսերեն հապավումները, որը թույլ կտա ընթերցողին նույնացնել թարգմանությունն ու հղված անվանումը:**